Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԲԺ – 01/2025

<Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի ոսկերչական գործարան> ԲԲԸ-ի
բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովի
արդյունքների մասին

ք. Երևան Արշակունյանց 12 20 հունիսի 2025թ.

<Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի ոսկերչական գործարան> ԲԲԸ-ի բաժնետերերի ընդհանուր ժողովը տեղի է ունեցել 2025 թվականի հունիսի 20-ին Ընկերության տարածքում:

Հրավիրված անձինք՝ խորհրդի անդամներ՝ Երոյան Տ. Ս., Գամբուրյան Ս. Կ., Եսայան Հ. Լ. և Ղազարյան Գ.Գ.:

<Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի ոսկերչական գործարան> ԲԲԸ-ի /այսուհետ նաև՝ Ընկերություն/ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցել են 17 բաժնետոմսի սեփականատեր, որոնք համատեղ տիրապետել են Ընկերության 753,276 ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 68.770975 %-ին:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավասու է եղել սկսել իր աշխատանքը:

Քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները և ընդունված որոշումները՝ ըստ օրակարգի հերթականության:

Ընկերության տարեկան ժողովը բացեց տնօրենների խորհրդի նախագահ Հրատ Ռուբենի Շիրինյանը: Նա ասաց, որ ժողովը վարելու համար պետք է ընտրվի ժողովի նախագահ և ժողովի քարտուղար: Նա առաջարկեց ժողովի նախագահ ընտրել Հ. Ռ. Շիրինյանին, իսկ ժողովի քարտուղար, Ընկերության տնօրենների խորհրդի քարտուղար Ն.Խ. Հակոբյանին:

Ընկերությունը բաց քվեարկությամբ ընտրեց ժողովի նախագահ Հ. Ռ. Շիրինյանին և ժողովի քարտուղար Ն. Խ. Հակոբյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Բաց քվեարկությամբ Ընկերության բաժնետերերը քվեարկեցին տարեկան ժողովի նախագահի և քարտուղարի վերաբերյալ.

կողմ՝ 753,276 ձայն, դեմ չկա, ճեռնպահ՝ չկա:

Ժողովի նախագան տարեկան ուղերձի բաժնետերերին ընթերցելու համար ձայնը տվեց գլխավոր տնօրեն՝ Տիգրան Սամվելի Երոյանին:

Գլխավոր տնօրեն՝ Տ. Ս. Երոյանը
ընթրցեց Ընկերության խորհրդի նախագահի և գլխավոր տնօրենի ուղերձը բաժնետերերին:

Հարգելի բաժնետերեր.

2024 թվականը լի էր տարբեր տնտեսական և քաղաքական ճգնաժամային և հետճգնաժամային իրավիճակներով, որոնք Ընկերության կոլեկտիվի ու մենեջմենթի համար առաջացնում էին լրացուցիչ մարտահրավերներ՝ Ընկերության գործունեության շարունականության ապահովման և զարգացման ծրագրերի իրականացման առումներով:

Այնուհանդերձ, ամփոփելով Ընկերության 2024 թվականի գործունեության արդյունքները, որոշակի գոհունակությամբ կարող ենք փաստել, որ 2024 թվականին Ընկերության կոլեկտիվի ու մենեջմենթի համառ ջանքերի շնորհիվ հաջողվեց ապահովել ոչ միայն Ընկերության անխափան աշխատանքն ինչպես ներքին, այնպես էլ եվրասիական շուկաներում:

Իրականացվել է Ընկերության Տնօրենների խորհուրդի կողմից հաստատված Ընկերության 2024 թվականի կապիտալ ներդրումների ծրագրով նախատեսված տեխնիկական վերազինման, սարքավորումների վերակառուցման և արդիականացման աշխատանքները, ինչի արդյունքում գրանցվել է պերճանքի առարկաների, ոսկերչական իրերի, թանկարժեք զարդեղենի, ժամացույցների, հանդերձանքի պարագաների արտադրության և վաճառքի աճը:

Եթե ամփոփենք Ընկերության 2024 թվականի գործունեության հիմնական տնտեսական արդյունքները թվերով, ապա դրանք հետևյալն են.

հիմնական միջոցները 2024 թվականի հաշվետու տարվա վերջում կազմել են 2,409,349 հազ. ՀՀ դրամ, պաշարները՝ 1,961,582 հազ. ՀՀ դրամ, հասույթը կազմել է 2,576,833 հազար ՀՀ դրամ, զուտ շահույթը հարկումից հետո՝ 167,730 հազար ՀՀ դրամ:

Վերոնշյալ խնդիրների լուծման և ցուցանիշների ապահովման գործում իր ուրույն տեղն ունի նաև Ընկերության տնօրենների խորհուրդը, որ 2024 թվականի ընթացքում անցկացրել է 6 նիստ, քննարկել է ընթացիկ և ռազմավարական մի քանի տասնյակ հարցեր և ընդունել Ընկերության կայուն գործունեության ապահովման համար անհրաժեշտ որոշումներ:

Ընկերության տնօրենների խորհուրդի հիմնական աշխատանքների շնորհիվ ապահովվել է նաև Ընկերության բաժնետերերի իրական մասնակցությունն Ընկերության կառավարմանն և առավել կարևոր որոշումների ընդունման հարցերում:

Ընկերությունը աշխատել է մասամբ առանց խափանումների, ապահովելով հուսալի և անխափան աշխատանքը զնորդ հաճախորդներին ներքին և եվրասիական տարածաշրջանում: Առաջիկա տարում Ընկերության մենեջմենթը պետք է հաջող ապահովի «Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ-ի աշխատանքը:

Խորհրդի նախագահ	Հ. Ռ. Շիրինյան
Գլխավոր տնօրեն	Տ. Ս. Երոյան

1. Ընկերության տարեկան ժողովի վարման կարգի հաստատումը

Ժողովի նախագահ Հրանտ Ռուբենի Շիրինյանը տեղեկացրեց ժողովին մասնակցող հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերին 2024 թվականի ժողովի վարման կարգի մասին:

Նա ասաց, ընդհանուր տարեկան ժողովն Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է: Բաժնետիրական Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի տարեկան ժողով: 2024 թվականի հերթական ժողովը անցկացվում է կանոնադրությամբ սահմանված ժամկետներում և պետք է անցկացվի տարին առնվազն մեկ անգամ՝ պարտադիր կարգով: Համաձայն Ընկերության կանոնադրության այն պետք է կազմակերպվի ոչ ուշ, քան հունիսի 30-ը, ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ամսվա ընթացքում:

Ընկերությունը սույն թվականի մայիսի 15-ին հրապարակել է http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ 2024 թ. հերթական տարեկան ժողովի գումարման մասին հայտարարությունը և օրակարգը: Միևնույն ժամանակ բաժնետերերը՝ 2024 թ. տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների, հաշվեկշռի ստուգման վերաբերյալ աուդիտորի և վերստուգող հանձնաժողովի եզրակացությունների, ինչպես նաև կանոնադրությամբ նախատեսված այլ տեղեկություններ (նյութեր) կարող են ծանոթանալ Ընկերության ընդհանուր բաժնում և հաշվապահությունում:

Ընդհանուր 2024թ. տարեկան ժողովի բացումից առաջ կատարվել է ժամանած հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերի գրանցումը, համաձայն <Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա> ԲԲԸ-ի հաշվի օպերատոր <Արարատբանկ> ԲԲԸ-ից ստացած Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերի ցուցակի (ռեեստրի):

Տարեկան ժողովին կարող են մասնակցել բաժնետերերը, անվանատերերը և նրանց ներկայացուցիչները: Ընկերության 2024 թվականի տարեկան ժողովին մասնակցում են միայն հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերեր:

Մասնակիցները ընդհանուր ժողովում քվեարկում և որոշումներ են կայացնում միայն օրակարգի այն հարցերի վերաբերյալ, որոնց մասին նրանց սահմանված կարգով տեղեկացվել են:

Եթե մասնակիցներից որևէ մեկը քվեարկության է դնում օրակարգում չնախատեսված հարցեր, ապա այդ հարցերը պետք է արտացոլվեն արձանագրության մեջ: Այնուհետև մասնակիցները քվեարկում են օրակարգի հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելու օգտին, դեմ կամ ձեռնպահ: Ընկերության կանոնադրությունում նշված են յուրաքանչյուր հարցի համար անհրաժեշտ որոշումներ ընդունելու ձայների քանակը:

Այսպիսով Ընկերության տարեկան ժողովի վարման կարգը տեղեկացվեց մասնակիցներին և բաց քվեարկությամբ հաստատվեց:

Բաց քվեարկեցին Ընկերության տարեկան ժողովի վարման կարգի վերաբերյալ.
Կողմ *753,276* ձայն, դեմ չկա, ձեռնպահ՝ չկա:

2. Հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը

Ժողովի նախագահ Հ.Ռ.Շիրինյանը ասաց, որ 2024 թվականի տարեկան բաժնետերերի ժողովի քվորումը հաստատելու, ժողովում օրակարգի հարցերի քվեարկության կարգի վերաբերյալ բաժնետերերին և նրանց ներկայացուցիչներին բացատրություններ տալու, քվեարկության սահմանված կարգը և բաժնետերերի՝ քվեարկությանը մասնակցելու իրավունքն ապահովելու, ձայների հաշվարկի իրականացման, քվեարկության արդյունքների ամփոփման նպատակով պետք է ընտրել հաշվիչ հանձնաժողով՝ բաղկացած 3 անձից:

Ելնելով նշվածից, Հ. Ռ. Շիրինյանն առաջարկեց որպես հաշվիչ հանձնաժողովի անդամներ ընտրել՝ Արմինե Գևորգի Ժամհարյանին, Լիլիթ Սողոմոնի Սուքիասյանին և Անահիտ Սարգսի Սարգսյանին

Բաց քվեարկեցին. բոլոր թեկնածուների համար.
կողմ՝ *753,276* ձայն, դեմ չկա, ձեռնպահ՝ չկա:

Հաշվիչ հանձնաժողովը բաշխեց պարտականությունները և որոշեցին.

Որոշեցին.
Ընկերության հաշվիչ հանձնաժողովի պարտականությունները բաշխել հետևյալ ձևով.
Արմինե Գևորգի Ժամհարյանին ընտրել հաշվիչ հանձնաժողովի նախագահ,
անդամներ՝ Լիլիթ Սողոմոնի Սուքիասյան և Անահիտ Սարգսի Սարգսյան

3. Ընկերության տարեկան ժողովի օրակարգի հաստատումը

Ժողովի քարտուղար Ն. Խ. Հակոբյանը ժողովի բաժնետեր մասնակիցներին ծանոթացրեց տարեկան ժողովի օրակարգին:

Ժողովի օրակարգը՝

1. *Ընկերության տարեկան ժողովի վարման կարգի հաստատումը*
2. *Հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը*
3. *Ընկերության տարեկան ժողովի օրակարգի հաստատումը*
4. *Ընկերության գլխավոր տնօրենի և գլխավոր հաշվապահի տարեկան հաշվետվությունները*

5. *Ընկերության հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը:*
6. *Ընկերության տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ վերստուգող հանձնաժողովի եզրակացությունը*
7. *Ընկերության աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը.*
8. *Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների թեկնածուների առաջարկությունը և նրանց ընտրությունը*
9. *Ընկերության 2025թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձի մրցույթի ժամկետի հաստատումը*
10. *Այլ հարցեր*

Բաց քվեարկությամբ բաժնետերերը քվեարկեցին տարեկան ժողովի օրակարգին.

կողմ՝ *753,276* ձայն, դեմ չկա, ձեռնպահ՝ չկա:

Որոշեցին.

Հաստատել տնօրենների խորհրդի կողմից առաջարկված տարեկան ժողովի օրակարգը:

4. Ընկերության գլխավոր տնօրենի և գլխավոր հաշվապահի տարեկան հաշվետվությունները

Օրակարգի չորրորդ հարցը ներկայացրեցին գործադիր մարմնի ներկայացուցիչները գլխավոր տնօրեն Տ. Ս. Երոյանը և գլխավոր հաշվապահ Ա. Ս. Մակարյանը: Գլխավոր տնօրենը ասաց, որ 2024 թվականի տարեկան հասույթը կազմում է 2,576,833 հազար դրամ, որը 697,864 հազար դրամով ավել է 2023 թվականի հասույթից:

Ընկերության հասույթն առաջացել է ժամացույցների իրացումից՝ 262 հատ ընդհանուր գումարով 63,448,339 դրամ, այդ թվում արծաթյա ժամացույց 137 հատ 16,740,480 դրամ գումարով; ոսկյա իրեր շղթաներ, ապարանջաններ և թանկարժեք քարերով իրեր 3558 հատ ընդհանուր գումարով 1,784,830,897 դրամ; հուշամեդալներ ոսկյա 271 հատ 350,209,400 դրամ գումարով, արծաթյա 263 հատ 11,413,689 դրամ գումարով և արույրե 7903 հատ 47,902,779 դրամ գումարով; այլումինե տարբերանշաններ 207,736 հատ 11,884,910 դրամ գումարով:

Ամփոփելով ելույթը Տ. Ս. Երոյանն առաջարկեց հաստատել տարեկան հաշվետվությունները:

Ելույթ ունեցավ գլխավոր հաշվապահ Ա. Ս. Մակարյանը: Նա ներկայացրեց 2024 թվականի ֆինանսական ցուցանիշների գործակիցները, ինչպես նաև մանրամասն ներկայացրեց հաշվեկշիռի հիմնական տվյալները: Ըստ Ընկերության 2024 թվականի համապարփակ ֆինանսական գործունեության արդյունքների Ընկերության 2024թ. տարվա շահույթը կազմում է 171,869 հազար դրամ, հարկումից հետո՝ 167,730 հազար դրամ: Ա. Ս. Մակարյանը մանրակրկիտ բացատրեց տարեկան ժողովում գտնվող բաժնետերերին 2024թ. առաջացած շահույթի տարրերը: Ընկերության վաճառքի ինքնարժեքը 2,205,082 հազար դրամ, վարչական ծախսերը 120,282 հազար դրամ և այլ գործառնական ծախսեր 87,175 հազար գրամ: Ընկերության 2024 թվականի գործառնական գործունեությունից շահույթը կազմում է 181,342 հազար դրամ, իսկ 2023 թվականին կազմել է 98,139 հազար դրամ: Ընկերության կուտակված շահույթը կազմում է

2,953,530 հազար դրամ, պահուստային կապիտալը 63,433 հազար դրամ, ընդամենը սեփական կապիտալի մեծությունը կազմում է 4,112,303 հազար դրամ:

Ամփոփելով ելույթը՝ Ա. Ս. Մակարյանն առաջարկեց հաստատել տարեկան հաշվետվությունները:

5. Ընկերության հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը:

Ելույթ ունեցավ Ընկերության խորհրդի նախագահ Հ.Ռ. Շիրինյանը: Նա նույնպես կոչ արեց բաժնետերերին հաստատել տարեկան հաշվետվությունները: Առաջարկվեց Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից 124,474,275 դրամ հատկացնել շահաբաժիններին, մեկ բաժնետոմսի շահաբաժնի մեծությունը սահմանել 116.3517458 դրամ:

Փակ քվեարկությամբ բաժնետերերը քվեարկեցին Ընկերության հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահաբաժնի վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահաբաժինի չափի հաստատումը:

Կողմ *753,276* ձայն, դեմ չկա, ձեռնպահ՝ չկա:

Որոշեցին.

1. *Հաստատել Ընկերության 2024 թվականի տարեկան հաշվետվությունները, այդ թվում՝ հաշվապահական հաշվեկշիռը, շահույթների և վնասների հաշիվը:*
2. *Վճարել 2024 թվականի գործնեության արդյունքում առաջացած շահույթից շահաբաժիներ: Մեկ բաժնետոմսի ընկած շահաբաժինը կազմում է 116.3517458 դրամ:*
3. *Շահաբաժինների վճարումների սկիզբը համարել 2025 թ. հոկտեմբերի 1-ից:*
4. *Վճարումը կատարվում է 20 տարիների ընթացքում մինչև 2045 թ. հոկտեմբերի 1-ը:*
5. *Ընկերության 2024 թ. շահաբաժինը կստանան այն բաժնետերերը ովքեր ընդգրկված են բաժնետերերի ցուցակում 2025 թվականի հունիսի 2-ը ներառյալ:*

6. *Ընկերության տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ վերստուգող հանձնաժողովի եզրակացությունը*

Օրակարգի վեցերորդ հարցը ներկայացրեց վերստուգիչ հանձնաժողովի նախագահ Մ. Գ. Հարությունյանը: Նա ասաց, որ վերստուգող հանձնաժողովի կարծիքով, հաշվապահական հաշվետվությունները պատրաստվել են այնպես, որպեսզի ապահովվի ընկերության ակտիվների և պասիվների արտացոլումը 31.12.2024 թվականի դրությամբ, նրա գործունեության 2024 թվականի ֆինանսական արդյունքները, համապատասխանում են ՀՀ գործող հաշվապահական հաշվառման քաղաքականության նորմատիվ ակտերի պահանջներին: Ամփոփելով ելույթը՝ Մ. Գ. Հարությունյանն առաջարկեց հաստատել դրանք:

Բաց քվեարկությամբ հաստատեցին վերստուգող հանձնաժողովի եզրակացությունը

կողմ՝ *753,276*, դեմ չկա, ձեռնպահ չկա

Որոշեցին՝

Հաստատել վերստուգող հանձնաժողովը հաշվետվությունը:

7. Ընկերության աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը.

Ելույթ ունեցավ Ընկերության գլխավոր հաշվապահ Ա. Ս. Մակարյանը: Նա ընթերցեց <Պրոգրես աուդիտ> ՍՊԸ-ի եզրակացությունը: Եզրակացությունում ընդգրկված եր Ընկերության արժանահավատ հաշվապահական տվյալների մասին:

8. Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների առաջադրվող թեկնածուների մասին և նրանց ընտրությունը

Ութերորդ հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ ժողովի քարտուղար, խորհրդի անդամ Ներսես Խաչատուրի Հակոբյանը ասաց, որ լրացել է վերստուգող հանձնաժողովի անդամների լիազորությունների ժամկետը և պետք է ընտրվի նոր վերստուգող հանձնաժողով: Սույն թվականի մայիսի 20-ին կայացած խորհրդի նիստում այդ հարցը քննարկվել է և Ընկերության տարեկան ժողովին առաջարկվում են հետևյալ անձանց թեկնածուները՝ Մարջան Գարեգինի Հարությունյանը, Մարգո Սանասարի Հակոբյանը և Գոհար Ռաֆիկի Սաֆարյանը: Երեք թեկնածուները ներկայումս աշխատում են Ընկերությունում և հանդիսանում են բաժնետերեր: Նրանք երկար տարիներ աշխատում են Ընկերությունում, բաժնետերերի և աշխատողների կողմից վայելում են հարգանք և ունեն հեղինակություն, բնութագրվում են որպես սկզբունքային աշխատակիցներ ունեն Հարությունյան Մ. Գ. - 95 բաժնետոմս, Հակոբյան Մ. Ս. - 159 բաժնետոմս և Սաֆարյան Գ. Ռ. - 200 բաժնետոմս:

Ժողովի մասնակիցները նկարագրեցին թեկնածուներին, որպես պատասխանատու անձանց:

Փակ քվեարկությամբ ժողովի մասնակից բաժնետերերը քվեարկեցին վերստուգող հանձնաժողովի անդամների թեկնածուների վերաբերյալ:

h/h	ԱԱՀ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1	Մարջան Գարեգինի Հարությունյանը	753,276	չկա	չկա
2	Մարգո Սանասարի Հակոբյանը	753,276	չկա	չկա
3	Գոհար Ռաֆիկի Սաֆարյանը	753,276	չկա	չկա

9. Օրակարգի յոթերորդ հարցը ներկայացրեց գլխավոր տնօրեն Տ. Ս. Երոյանը: Նա առաջարկեց Ընկերության 2025 թվականի աուդիտ իրականացնող անձի մրցույթի ժամկետը հաստատել 2026 թվականի հունվար ամիսը: Այլ առաջարկություններ չկար:

Փակ քվեարկեցին. կողմ՝ *753,276* ձայն, դեմ չկա, ձեռնպահ՝ չկա:

Որոշեցին. Ընկերության աուդիտ իրականացնող անձի մրցույթի ժամկետը հաստատել 2024 թվականի հունվար ամսին:

8. Ընկերության տարեկան ժողովին հաշվետվություններ ներկայացրեցին՝

Խորհրդի անդամ Ն. Խ. Հակոբյանը:

Նա տեղյակ պահեց բաժնետերերի ընդհանուր ժողովին ներկայումս բաժնետերերի ցուցակի /ռեեստրի/ վերաբերյալ:

Համաձայն <Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիյա> ԲԲԸ-ի հաշվի օպերատոր <ԱՐԱՐԱՏԲԱՆԿ> ԲԲԸ-ի կողմից ստացված սույն թվականի հունվարի 14-ին ժամը 18:00

դրությամբ բաժնետերերի ցուցակի, ռեեստրի թղթային գրանցամատյանում նշված են 1441 բաժնետեր:

Ինչպես հայտնի է, նույնականացման գործընթացը Ընկերությունում սկսվել է 2021 թվականի հունիսի 21-ից: Եթե 2022 թվականի վերջին նույնականացման գործընթացը անցել էին 865 բաժնետեր, ապա 2023 թվականի վերջին մնացել էին 645 բաժնետերեր, իսկ 2024 թվականի վերջին մնացել են 516 բաժնետեր, այդ թվում 73 բաժնետիրոջ անձնագրի տվյալները պետք է թարմացվեն: 2024 թվականին 4 բաժնետեր վաճառել են իրենց պատկանող Ընկերության բաժնետոմսերը: Ներկա պահին դեպոզիտարիաում նույնականացման գործընթացում գտնվում է 4 բաժնետերերի փաստաթղթերը, իսկ 2021 թվականից մինչ 2025 թվականի հունիս ամիսը 17 բաժնետերերին մերժվել են նույնականացումը համաձայն <Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի> կանոնների, նրանք պետք է դիմեն դատարան վերականգնելու իրենց սեփականության իրավունքը:

Սուբեկտիվ ճշտված տվյալների համաձայն մոտ 141 բաժնետերեր մահացել են: Ընկերության բաժնետերեր են հանդիսանում Հայաստանի, Շվեդիայի, Ռուսաստանի Դաշնության, Ֆրանսիայի, Արգենտինայի, Վրաստանի և Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքացիներ, որոնցից մի քանիսը ունեն երկքաղաքացիություն:

2024 թվականի սկզբից մինչ 2025 թվականի առաջին կիսամյակ 18 բաժնետերեր ստացել են իրենց նախկինում չստացած շահաբաժինները:

Այլ հարցեր՝

Ելույթ ունեցավ ժողովի նախագահ Հ.Ռ. Շիրինյանը, նա տեղեկացրեց ժողովին, որ Էմիլ Գուրգենի Գրիգորյանին նվիրված հուշատախտակի բացումը տեղի կունենա հունիսի 25-ին:

Սույն արձանագրությունը կազմված է 20.06.2025 թվականին և բաղկացած է 7 /յոթ/ էջից:

Բաժնետերերի ընդհանուր ժողովի նախագահ՝ Հ. Ռ. Շիրինյան

Բաժնետերերի ընդհանուր ժողովի քարտուղար՝ Ն. Խ. Հակոբյան